



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 փետրվարի 2015թ.

N 59-Ա

ք.Ստեփանակերտ

ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ ԸՆԴԳՐԿՈՂ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 34-րդ հոդվածի 3-րդ մասին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրատարածքներ կազմավորելու և ընտրատարածքները համարակալելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 22-ի N 74/257-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N15-Ն որոշմանը համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի 2015 թվականի մայիսի 3-ի ընտրությունը կազմակերպում և անցկացնում է՝

1) թիվ 10 ընտրատարածքում ընդգրկված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Բերձոր, Կովսական, Միջնավան, Որոտան, Ալաշկերտ, Աղաձոր, Աղանուս, Աղավնատուն, Աղավնո, Այգեհովիտ, Այգեկ, Արախիշ, Արծվաշեն, Արտաշավի, Գանձա, Գետամեջ, Գետափ, Գողթանիկ, Դրախտաձոր, Երիցվանք, Իշխանաձոր, Լեռնահովիտ, Ծաղկաբերդ, Ծիծեռնավանք, Ծոբաձոր, Կերեն, Կումարի, Հակ, Հակարի, Հայկազյան, Հոչանց, Ձորափ, Ղազարապատ, Մամարք, Մարտունաշեն, Միրիկ, Սշենի, Մոշաթաղ, Մուշ, Ներքին Մուս, Նորաշենիկ, Շալուս, Սարատակ, Սոնասար, Վակունիս, Վաղազին, Վան, Վարդաբաց, Վուրգավան, Տիգրանավան, Ուռեկան, Փակահան, Քաշունիք, Քարեգահ և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի Շուշի, Եղսահող, Լիսագոր, Հին շեն, Մեծ շեն, Քարին տակ, Քիրսավան համայնքներում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի տարածքային ընտրական հանձնաժողովը.

2) թիվ 11 ընտրատարածքում ընդգրկված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Առաջաձոր, Գառնաքար, Դրմբոն, Թբլդու, Ծմակահող, Կիչան, Կոճողոտ, Հարությունագոմեր, Նոր Ղազանչի, Շահմասուր, Չլդրան, Պողոսագոմեր, Վաղուհաս, Վանք, Վերին Հոռաթաղ, Քոլատակ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի Քարվաճառ, Ակնաբերդ, Դաղիվանք, Եղեգնուտ, Զուար, Ծար, Հավսաթաղ, Նոր Բրաջուր, Նոր Գետաշեն, Նոր Էրքեջ, Նոր Կարաչինար, Նոր Խարխափուտ, Նոր Մանաշիդ, Նոր Վերինշեն, Չարեքտար, Քնարավան և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Այգեստան, Ասողաշեն, Դահրավ, Լուսաձոր, Խանցք, Խաչեն, Խնածախ, Խնձրիստան, Ծաղկաշատ, Հիլիս, Պատարա, Ռև համայնքներում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի տարածքային ընտրական հանձնաժողովը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ